



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6981

Բ
Գրաքանչիկ Հիշեա
Հիմնակարգ



1886

ԱՐԳ

ԵՐԵՒԵԼԻ ԱՐԱՆՑ

261

ԼԻՎԱՆԿԱՍԹԸՆ

ՊԱՐԳՄԱՆԵԱԾ

ՄԻՀՐ ԱՆ Գ. ՄՈԶԵՍՆ

Նախկին սան Գերափերեան Վարժարանի



Կ. ՊՈԼԻՍ

ԿԵՊԱՐԱԿԻ ՄԱՐԳԱՐԵԱՆ

(1588)

ՀԻՎԻՆԿԱՍԹԸ ԸՆ

919/1
4-87

ԵՒ

Ուղեւորութիւնք իւր ի խորս Կեղ-
րոնական Ա. Փրիկէլ :

ՀՅԱՅԱ

Լիվինկաթըն ծնաւ ի Սկովտիա, 1845 ին,
Պլանթայր գիւղին մէջ : Իւր ծնողը պարզ
մշակներ էին, և ուղեցին որ իրենց զաւակը
գործաւոր լինի : Լիվինկաթըն հնազանդեցաւ
և այն ատենէն ի վեր իւրեան համար գի-
տութեան գոները գոյցուած էին : Սակայն
կընար գերմարդկային ճիգերով խորտակել
բոլոր խոչնդուները և հասնիլ իւր բաղձա-
նաց կատարը : Իւր կեանքն երկու մասի
բաժնեց . մին նուիրեալ հողագործութեան
և միւսն՝ ուսման : Առաւօտուն, գործատուն
երթալէ առաջ կը կարդար . երեկոյին կը
մեկնէր անտի վերստին բանալու համար իւր
գիրքն . նոյն իսկ ողջոյն օրն գրական կամ
գիտական գործ մունենալով իւր առջեւ,
անյագաբար կը լափէր աչքերովն գրքին ե-

ըեաները, մինչ իւր ձեռքերն իրենց պաշտօնը կը կատարէին: Այս եղանակաւ կարողացաւ նա ուսանիլ լատիներէն, ուսողութիւն, պատմութիւն, բժշկութիւն, աշխարհագրութիւն, դրագիտութիւն, և աստուածաբանութիւն:

Տամ և ինն տարեկան հասակին մէջ երեւելի կտաւագործ մը եղաւ, և չնորհիւ իւր ըրած ինայողութեանց կրցաւ ձմեռն անցունելի կլասկօվ յառաջ տանելոյ համար բժշկական ու աստուածաբանական ուսմունքները, ուսումնասիրելով նաեւ դէելլեն լեզուն:

Տօթէօրի աստիճանին արժանացած, մը տադիր եղաւ միսիօնար լինել և երթալ քարոզել զԱւետարանն Եւրոպիոյ քաղաքաց մէջ: Բարեյուուոյ գլուխն համելով, կ'իմանայ թէ Սնկիացիք կը պատերազմին Զինաց հետ աֆիօնի ինդրոյն պատճառաւ և կը փոխէ իւր կարծիքն: Կ'ամուսնանայ Տօթէօր Մօֆաթի աղջկան հետ, որ բազմաթիւ տարիներէ ի վեր հարաւային Ափրիկէի սովորութեանց վարժուած օրիորդ մ'էիք:

Յետ իւր ամուսնութեան, կը մլապրաստուի ճանապարհորդելով ընկերացեալիւր

204

259-51-619

կնոջ և Միւրէյ ու Օավէլ անուանեալ երկու յանդուգն որսորդաց հետ: Հինգ զոյգ եղներու լծեալ կարավանը կը համնի յեզերս Օրանժ գետոյն և անտի կը մեկնի Քիւրիւման անուանեալ երկիրն որ ընդարձակ բընակավայր մ'է վարդներու, անգեղջիւրներու, ցուլերու, ընձուղտներու և այլն:

Բնկիներն որսալու համար վերոյիշեալ կենդանիներն, հօֆօ անուանեալ փոսեր կը պեղեն ուր վայրենի անսասունք գահավիժելով իրենց համար պատրաստուած թակարդի մը մէջ կիյնան: Ախիմնկոթըն մի քանի տարի Սէշէլի անուն պետի մը քով բնակեցաւ և իւր ներկայութիւնն չարագուշակ աղդեցութիւն մը ի գործ դրաւ բնիկներուն վրայ, որովհետեւ ահաւոր երաշտութիւն մը աւերեց ողջոյն երկերը և ամեն որ սկսաւ այդ արկածը իւր վտանգաւոր աղդեցութեան վերագրել: Ընդերկար կաթիլ մ' անձրեւ չինկաւ երկրի վերայ և Ախիմնկոթըն ընդհանուր ատելութեան մ' առարկայ լինելով՝ ստիպուեցաւ թողուլ Քիւրիւմանի երկիրը և ուղեւորիլ գէպ ի հիւսաւային կողմն Ափրիկէի:

Տօթէօր Ախիմնկոթըն և ընկերակիցք իւր անցան Քալահարի անապատին մէջէն և

1849 տարւոյն օդոստոս ամսոյն մէջ գտան
Նկամի լիճը, մին հարաւայրն ափրիկէի ա-
մեսէն գեղեցիկ լիճերուն : Լճն պետք շատ
գեշ ընդունելութիւն մ' ըրաւ նոր հիւրե-
բուն :

Լիվինկսթըն յուսահատեալ թողուց սոյն
ամայի վայրերը և գնաց Փայօլօսի երկիրը
ոյր բնակիչք տգիտութեան մէջ թաղուած
էին : Լիվինկսթըն ուզեց ընթերցում ուսու-
ցանել տգէտ բնիկներուն որք կախարդա-
կան գործ մը կը նկատէին դիրն : Յանդու-
գն և խելացի վայրենի մը հաւանեցաւ դաս
առնել Լիվինկսթընէ : Այն ինչ բացաւ այր-
բենաբան մը և ահա՛ կարծեց լինել մահուան
վտանդին մէջ : Մեծ եղաւ իւր զարմացումն
երբ, յետ ուսանելոյ առաջին տառերն, նշ-
մարեց թէ հիւանդ չէր : Եկաւ յայտարա-
ըել պետին թէ ընթերցումն անվնաս բան
մ' էր, և չնորհիւ իւր այս տուած վստահու-
թեան, իւր ընկերակիցք սիրեցին այն ատեն
ընթերցումն և ոմանք ալ ուսանելոյ անհա-
ւատալի դիւրութիւն մը ցցուցին :

Փայօլօսի կանայք յոյժ գեղանի են . մար-
միննին կարտքով կը վայլեցնեն և ոտքեր-
նուն վրայ կապարեայ կամ փղոսկրեայ օ-

զակներ կանցնեն : Բաց աստի , տարօրինակ
սովորութիւն մ' ալ ունին, այն է վերի ծնօտին
վրայ գտնուող ակռայներն արմատախիլ ը-
նել : Պօկոլօս կոչուած ոդելից ըմպելի-
քով մը կարբենան և կը ծեծեն իրենց ամու-
սինը : Լիվինկսթըն հաստատելով իւր բնա-
կութիւնն Լենեանթի մէջ, այցելեց Զան-
պէղի Ջրվէժները և նորա շրջակայքն կարե-
ւոր ու հետաքրքրաշարժ խոյզեր ըրաւ :

Փափաքեցաւ մեծ ուղեւորութիւն մը
ընել Արևմտեան կողմէն մինչ ցեղերս Անդ-
լանտեանի , այսինքն անծանօթ և ամայի
երկիրներուն մէջէն 400 մլոն երկայնութիւն
ունեցող ճանապարհ մը : Մտաւ Պարօցէի
երկրին մէջ և բնակութիւն հաստատեց
ի Լենեանթի ոյր բնակիչք քաղաքավար են
և այցելուի մը բարեկամական նշաններ ցը-
ցունելու համար , մոխրով լի պարկ մը կը
բերեն և կը շփեն նորա բազուկներն ու կուրծ-
քը մոխրով :

Լիվինկսթըն մեծ պատուով ընդունուեցաւ
Զինթէ թագաւորէն և հարիւրի չափ կանայք
մելամաղձիկ երգերով ու թմբուկի ձայներով
ողջունեցին իւր գալուստն :

Լիվինկսթըն մողական լապտերի ներկա-

յացում մը տուաւ Զինթէ թագաւորին և
նորա պալատականաց առջև։ Տասն օր վերջը
Զինթէ այցելութիւն մը տուաւ Լիվինկոմիլընի
և իւր վերարկուն տակէն մանեակ մը հա-
նելով, նորա վիզն անցուց։

Կարավանը մեկնեցաւ և հասաւ Ա. Բօլ
Տը Լէօնտա քաղաքը։ Ովկիանու ահաւոր
տեսիլն երկիւղ և զարմանք միանդամայն
առթեց Զանպէզցոց։ Լիվինկոմիլըն ընդ եր-
կար չը մնաց այս վայրերուն մէջ։ 1855,
նոյ. 3 ին, կը մեկնէր նոր արշաւանք մը
ընելու համար։ Այս անդամ գէպի հնդկաց
Ովկիանոսն կը դիմէր։ Զանպէզի եղերաց հե-
տեւելով, ողջունեց Ակրթորիա անուամբ
Զանպէզի ջրվէժն որ արժանի հակառակորդն
է Նիսկարայի։ Այցելց բազմաթիւ քաղաք-
ներ, ի մէջ այլոց Պաթօքա և Պանեախ։

« Եւրոպացոյ մը գալուստն, կըսէ Լի-
վինկոմիլն, բնիկներուն զարմանք կառթէ։
Նոքա իրենց գոհունակութիւնը յայտնելու
համար, կոնակի վրայ կը պառկին, հողին
վրայ կը թաւալին, և կը ծեծեն սիրտերնին։ »
Լիվինկոմիլըն բնիկներուն համակրութեան ար-
ժանի եղաւ. բնիկք Մաքոլո ի պաշտեցին
զինքը եւ անհուն վիշտ մը զգացին երբ իմա-

ցան նորա մեկնիլն եւ եկան ի ծունը իջնալ
նորա ոտիցն առջեւ աղաջելով միանդամայն
նմա որ զիրենք ալ ի միասին յԱնկիլիա տա-
նի։

Լիվինկոմիլըն միայն սեւամորթի մը աղաջանա.
ցն զիջանելով, իւր հետ առաւ զայն։ Սոյն
պաշտպանութիւնը աղետաբեր եղաւ տարա-
բաղդ սեւամորթին. այն ինչ նաւը մոտաւ,
եւ ահա ծովին առթեց իւրեան մի այնպիսի
սոսկում որ յիմարանալով, ինքինքն ալեաց,
յանձնեց։

Լիվինկոմիլըն վերադառձաւ յԱնկիլիա և
արժանավայել պատուով մը ընդունուեցաւ
ամենէն։ Մոռցած էր նա իւր հայրենակցաց
բարքն, նա մանաւանդ իւր մայրենի լեզուն։
Վերսկսաւ աշխատութեան և հրատարակեց
իւր ուղևորութեանց պատմութիւնն սոյն տիտ-
ղոսով. « ուղեւորութիւնն է ի՞ր կերպուակն Ա. Ք. Է-
կի », 1840 — 1856. աշխատութիւն մը որ
ամենամեծ յաջողութիւնն գտաւ։

Լիվինկոմիլն վրագէտ մը չէ, բայց իւր գր-
ուածներն կը փայլին անկեղծութեամբ որ կը
գերազանցէ լեզուի մը բոլոր դարդերն Ալ մեր-
ժէ ստութիւնն և անպատիւ գործ մը կը նկա-
տէ անհիմն հեղինակութիւն մը։ Օգտակար

Եղաւ գիտութեան և քաղաքակրթութեան .
Ներոպական անունն ափրիկեան ժողովրդոց
մէջ մտցուց . ջնջեց երկիւղի և ատելութեան
դգացո մներն զորս Ներոպիոյ անունն կը
զարթուցաներ այդ ժողովրդոց մէջ . վայրե-
նի ցեղերու մէջ տարածեց քաղաքակրթու-
թեան սերմերն որք որ մը պտղատու ծա-
ռեր յառաջ պիտի բերեն :

1858 ին , մեր մեծ ուղեորը կը վերադառ-
նայր Զանպէզի բերանը ընկերացեալ իւր
կնօջ և իւր զաւտկաց հետ . իւր բացակա-
յութիւնը վեց մարի պիտի տեէր . իւր գլ-
խաւոր նպատակն էր ուսումնասիրել Զան-
պէզի ընթացքն և նորա ձախակողմեան գե-
տակները : Վերստին ողջունեց իւր ճանա-
պարհին վրայ Վէտիօբէյէ Զբէժները , վերադառ-
ցաւ ի Լէնեանթի , սևամորթներէն մեծ
պատուով ընդունուեցաւ : Յետոյ Զանպէզի
շրջակայքը եղող Շիրէ անուանեալ գետակին
մէջ մտաւ : Իւր ճանապարհին վրայ կը հան-
դիպէր զանապան բարքեր ունեցող ժողովր-
դոց , բազմաթիւ ընիկներ սիրահար են զար-
դուց . իրենց մատանց վրայ երկաթեայ և պը-
զնձէ մատանիներ կը կրեն : Կանայք իրենց
վերի շրթունքին վրայ Յ հարիւրերորդամեթը

արամագիծ ունեցող մատանի մը կը կրեն :
Նիասա լճին մերձենալով՝ Լիվինկսթըն պի-
տի անցնէր այնպիսի երկիրներէ որք Փոր-
թուքալցի վարձակալներու բնակավայր ե-
ղած են նրբեմն : Մէն մի գիւղ , իտես ու-
ղեւորաց , սպառնալից կացութիւն մը կառ-
նոյր : Յեղերս Շիրէ գետակին , բնիկներն
պահութած ծառոց ճիւղոցն ներքեւ , իրենց
ձեռաց մէջ ունենալով աղեղներ , սպառնա-
կան ակնարկներ կարձակէին ուղեորաց վը-
րայ : Ընդարձակ լիճերն շրջապատող խոնաւ-
դաշտերն ծածկուած են բազմատեսակ ջրա-
յին թռչուններով : Երբ թռչին խմբովին ,
իրենց թեւն այնքան մեծէ որ կը ծածկեն
արեգական ճառագայլթները :

Զարմանագեղ եկբանիկներ , ոմանք կար-
մրագոյն , այլք դեղին , կը թռչին բարձր
խոտոց վերայ , արագիկներ կը թառին ցու-
լերու և փիզերու կռնակին վրայ . ճայեր կը
շրջին ի մէջ ճահիճներու :

Ավրիկէի լճերու բոլոր այս բնակիջներն
զարմանօք կը դիտէին շոգեշարժ նաւին ան-
ցանելն . չէին փախչեր , նաւին կը մերձենային
և հրացանին հարուածոցն զոհ կերթային :
Լիվինկսթըն և իւր ընկերակիցք մտան

Հիւրուա լճին մէջ որ այնքան հեռու չէ
Նիստա լճէն : Փոթորիկ մը պիտի տապալեր
Լիվինկաթընի նաւն եթէ անմիջական օդնու-
թիւններ չը հասնէին . ալիքներն կը բաղիսէին
նաւուն կողերուն դէմ և կը փշրուէին : Ժա-
մեր սահեցան այսպէս մահուան մօտալուտ վր-
տանդի մը առջև : Թիստագոյն ամպ մը ինչաւ
լեռներէն և կանգ առաւ անցորդաց գլխուն
վրայ : Նաւալարներն , տկարացեալ , չէին
կրնար պաշտպանել զնաւն մոլեդին ալեաց
դէմ : Գետեզերեայ բնակիչներն , ժայռերուն
վրայ կեցած , կը գուէին . « Կորսուած են ,
մեռած են » . վերջապէս խռովութիւնը դա-
զրեցաւ և նոքա կրցան գետեզըն հասնիլ .
Բնիկներն վազեցին եզերքն նաւուն քով , չէին
յադենար դիտելէ վրօնիքները , որ կը նշանակէ
վայրենի անասուն և այս անունը կուտային
Եւրոպացւոց : Զարմացման աղաղակիրով և
հաճոյալի կատակներով ողջունեցին զգալուս-
տըն Լիվինկաթընի : Լիվինկաթըն հասած էր
իւր նապատակին իւր այս երրորդ ուղեւորու-
թեան մէջ : Վերադառնաւ Անկուա 1864 ին ,
և հրատարակեց իւր երրորդ ուղեւորութեան
պատմութիւնը սոյն տիտղոսով : « Զառուկէ^Դ
Քիւմները և Հերուա և Նիստա լճէն 1858 - 1859 » :

Իւր այս գիտական արշաւանքներն բազմա-
թիւ անձանդ մահուան պատճառ եղան :
Իւր եղբայրն Կարոլոս և իւր կինն , իւր ձեռ-
նարկութեանց մտերիմ և անձնուէր այդ ըն-
կերն , զոհ գացած էին կլիմային սաստկու-
թեան : Հակառակ այս դառն կորստեանց .
Լիվինկաթըն 1865 ին , գարձեալ կը մեկնէր
յՍփրիկէ : Այս անգամ իւր նպատակն էր
Նիստայի շրջակայքը հաստատել միախօնարնե-
րու բնակութիւն մը . բայց աստի , խուզարկու-
թիւններ ընել ի խորա Ս. Վորիկէի այն եր-
կիրներուն մէջ ուր այցելած են Պորթըն Սրէք,
Կրանտ և Պէյքըր և վնատուել Նեղոսի ճշ-
մարիտ աղբիւրները : Սակայն քաղաքակիրթ
աշխարհն ի վերջոյ կորսնցուց նորա հետքե-
րն , չարագուշակ լուր մը տարածուած էր .
իւր ընկերներուն հետ ի միասին սպաննուեր
էր Նիստա լճին արևմտեան կողմը գտնուող
բնիկներէն : Սոյն տիսուր դէպքին պարագայ-
ներն այնքան ճշգրիտ էին որ ոչ ոք կը տա-
րակուսէր սա՝ տիսուր ճշմարտութեան վրայ
թէ Լիվինկաթըն զոհ եղածէ դիտութեան :
Տօքթէօր Բիրք , Զանգիպարի հիւպատոսն ,
վերսկսաւ խուզարկութեանց : Ամեն կողմի
ուահվիրայներ զրկուեցան : Վերջապէս օր մը :

Տօքթէօրին կողմանէ նամակ մը յանձնուեցաւ Զանզիպարի հիւպատոսին . Լիվինկսթըն տակաւին կը շրջէր լծերու երկիրը :

Երկու տարի անընդհատ լուր մը չեկաւ Լիվինկսթընէ : Անկղիս , այս երկարատև լութենէն յուսահատեալ , արդէն պատրաստած էր նոր արշաւանք մը ի խնդիր իւր մեծ ուղևորին : Պ . Սլմանլէյ (1) Նեւորէ Հեռալք լրագրոյն թղթակիցն առաջինն եղաւ երեկի ճանապարհորդը փնտուղներուն մէջէն : 1871 տարւոյն սկիզբն , Զանզիպարի մէջ կը գտնուէր : Նոյն տարւոյն օդոստոս ամսոյն մէջ կը գտնուէր ի Քաղէն , Ունիանեէմպէ դառւառին մէջ , ուսկից գընաց ի Ուժիժի ուր տեսակցութիւն . մ' ունեցաւ Տօքթէօրին հետ :

Ընդ երկար Լիվինկսթըն բաւական նամակներ ուղարկեց իւր հայրենի երկիրն բայց ի վերջոյ երկայն լութիւն մը պահեց : Այդ ժամանակէն ի վեր իւր հետքերն կորսուած էն Աֆրիկէի մէջ : Այսօր Անդղիական կառավարութիւնը թոշակ մը սահմանած է այդ-


(1) Մեր երրորդ տետրին նիւթը պիտի լինի սոյն նշանաւոր անձին կենսագրութիւնը որ կամբողջացնէ Լիվինկսթինի պատմութիւնը :

մեծ ուղևորին ընտանեացը և շնորհած է նմա ՀԱՐՍԻՍԻՆ ԱՓՐԻԿէի ՔՐԻՍՏՈ-ՓՈՐ ՔՈԼՈՄՊՈՍ տիտղոսը :

Պատիւ Լիվինկսթընի . վսեմ օրինակ բոլոր ուղևորաց : Ինքն եղաւ առաջին անգամ լուծողն այն աշխարհագրական խնդիրը որ կզբաղեցնէ մտքերն այնքան դարերէ ի վեր-

Ունչը Քօրինակէ





6981

00003067

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0003067

